**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» մարտի 2026թ. N ՄՈ/137-Ա

ք. Արմավիր

## «ԱՐՇԱԼՈՒՅՍԻ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարիամ Հովսեփյանի 2026 թվականի մարտի 13-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ**

1. «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիամ Հովսեփյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի մարտի 18-ից 20-ը ներառյալ՝ 3 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարիամ Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել

«Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լիլիկ Մուրադյանին:

3. «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լիլիկ Մուրադյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի մարտի 18-ից 20-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարիամ Հովսեփյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի մարտի 23-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ